



Վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության  
թեմայով քննարկում՝ Վանաձորում

19:08, 27 Հունիս, 2011

ՎԱՆԱՁՈՐ, 27 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊԵՏ: Լոռու

մարզպետարանի նիստերի դահլիճում այսօր կազմակերպված՝  
Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամի  
մասնակցությամբ հանդիպում- քննարկման ընթացքում արծարծվեցին Հայաստանում  
վերականգնվող էներգիայի օգտագործման ներկան ու հեռանկարները: Հիմնադրամի  
տնօրենին, անդամներին, ոլորտի մասնագետներին, հանդիպում-քննարկման  
մասնակիցներին ողջունելով՝ Լոռու փոխմարզպետ Արսեն Դարբինյանը հույս  
հայտնեց, որ օգտակար եւ արդյունավետ քննարկում կծավալվի եւ ներկաները  
կհեռանան՝ նոր գիտելիքներով զինված: ՀՀ կառավարության կողմից 2005թ.  
ստեղծված հիմնադրամի տնօրեն Թամարա Բաբայանը նշեց, որ ներկայում  
անհրաժեշտ էներգակիրների 97 տոկոսը ներկրող Հայաստանը սեփական  
վերականգնվող էներգիայի մեծ պաշարներ ունի, որոնց օգտագործումը թույլ կտա  
ապագայում բավարարել հանրապետության էլեկտրաէներգիայի պահանջարկի  
մինչեւ 30 տոկոսը:

Թ. Բաբայանը ներկայացրեց հիմնադրամի ստեղծման նպատակներն ու մինչ այժմ  
իրականացրած ծրագրերը: Վերականգնվող էներգետիկայի ոլորտում ներդրումները  
խրախուսելու, բնագավառը եւ շուկան զարգացնելու եւ առավել արդյունավետ  
դարձնելու, էներգախնայողության ուղղությամբ աշխատելու նպատակով ստեղծված  
հիմնադրամը մինչ այժմ 40 մլն ԱՄՆ դոլարի ծրագրեր է իրականացրել: Աջակցել է 26  
փոքր հէկ-երի (43,5 ՄՎտ, 160 ԳՎտ/ժ) կառուցմանը, 120 դպրոցի ջեռուցման  
աշխատանքներին, 8300 անապահով ընտանիքների (գազիֆիկացում, վառարանների  
ստեղծում), եւս 9000 ընտանիքների ջեռուցման պայմանների բարելավմանը,  
բնագավառին վերաբերող կրթական ծրագրեր, վերլուծություններ եւ  
ուսումնասիրություններ է կատարել:

Միայն Լոռու մարզում անապահով 1804 ընտանիք է աջակցություն ստացել,  
հիմնադրամի մասնակցությամբ կառուցվել է Սպիտակի թիվ 6 դպրոցի  
կաթսայատունը, 6 փոքր հէկ: Հիմնադրամի պոտենցիալն օգտագործելու եւ  
զարգացնելու անհրաժեշտություն կա հատկապես մարզերում: Լոռու մարզում  
բավականին լավ ուսումնասիրված եւ յուրացված է հիդրոէներգետիկ պոտենցիալը.  
Ձորագետ, Փամբակ եւ Դեբեդ գետերի ավազաններում հնարավոր է եւս 33 փոքր հէկ  
շահագործել: 2005 թվականին Պուշկինի լեռնանցքում, ԻԻՀ կառավարության կողմից  
տրամադրված 3,1 մլն ԱՄՆ դոլար դրամաշնորհով, Հարավային Կովկասում առաջին  
անգամ շահագործման հանձնվեց «Լոռի 1» հողմակայանը:

Հիմնադրամի պատվերով նկարահանված «Վերականգնվող էներգետիկա՝  
ձեռքբերումներ եւ հեռանկարներ» ֆիլմի ցուցադրությունից հետո, հիմնադրամի  
էներգախնայողության ծրագրի ղեկավար Տիգրան Սեկոյանը ներկայացրեց, թե  
ինչպես կարելի է կրկնակի կրճատել էներգիայի սպառումը հանրային շենքերում եւ  
օբյեկտներում, օրինակ՝ քաղաքապետարաններում, դպրոցներում եւ

մանկապարտեզներում: Նրա ելույթն առանձնապես հետաքրքրեց դպրոցների'  
քննարկմանը ներկա տնօրեններին, որոնց հարցերին հանգամանալից  
պատասխաններ տրվեցին: